ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ (1951—1953 ԹԹ.)

Ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակահատվածը (1951—1953 թթ.) ետպատերազմյան տարիներին Իրանում ծավալված ազգային-ազատագրական շարժման կարևոր փուլերից է, որը բավական շատ է արծարծվել իրանագիտական գրականության մեջ։

Այդ շրջանը և, մասնավորաբար, ազգային բուրժուազիայի կառավարության գործունեության ու քաղաքականության հետ առնչվող շատ հարցեր հետաքրքրել են նաև բուրժուական առանձին հեղինակների, որոնց աշխատություններում, սակայն, որոշակի դիտավորություններով աղավաղվել, իսկ հաճախ ուղղակի նենգափոխվել է իրականությունը։

Բուրժուական պատմագրությունն է հեղինակը գրեթե ավանդական դարձած այն թյուր տեսակետի, որը փորձում է ժխտել ազգային բուրժուազիայի կառավարության յուրահատկությունը և այն իր բնույթով բացարձակապես նույնացնել նախորդող և հաջորդող կառավարությունների հետ։ Այն հավասարապես հակված է պնդել նաև մեկ այլ ծայրահեղ տեսակետ, այն է՝ ընդգծել կառավարության քաղաքականության միանգամայն անկախ, ինքնուրույն բնույթը, շրջանցելով կառավարության գործունեությունը սահմանափակող գործոնների անվիճելի առկայությունը։

Բուրժուական պատմագրությունը սովորաբար անտեսում է ազգային բուրժուազիայի կառավարության քաղաքականության զարգացումը, այն աստիճանական և միանգամայն որոշակի տեղաշարժերը, առանց որոնց անհնար է տալ կառավարության քաղաքականության իրական նկարագիրը։

Իրանական բուրժուական պատմագրության որոշ հեղինակներ ազգային

բուրժուազիայի էությունն ու քաղաքականությունը մեծ մասամբ լուսաբանում են հետադիմական դիրքերից՝ բացահայտորեն կեղծելով պատմական իրողությունը։

Մոսադեղը երկրի համար տնտեսական և քաղաքական անկախություն նվաճելու անհրաժեշտ նախապայման էր դիտում Իրանի նավթարդյունաբերության ազգայնացումը և մոլեռանդորեն պայքարում էր նրա իրականացման համար։ Այսպիսի քաղաքականությունը, որի նպատակն էր, նախ և առաջ, ազատագրել երկիրն օտարերկրյա, մասնավորապես անգլիական, իմպերիալիզմի ազդեցությունից և երկրի համար ինքնուրույն զարգացման հնարավորություն ապահովել (որն, ի դեպ, անվանվել է «ենեգատիվ նացիոնալիզմ»), փաստորեն, անտիթեզիսն էր երկրի իշխող շրջանների կողմից կիրառվող, այսպես կոչված «պոզիտիվ նացիոնալիզմի» քաղաքականությանը, որը ամերիկյան հեղինակ Լ. Բինդերի բնորոշմամբ հանգում է հետևյալին. «...Իրանը պետք է համագործակցի այն երկրների հետ, որոնք իրենց օգնությունն են առաջարկում նրան։ Իրանը չպետք է հետևի լիակատար չեզոքության այն դեպքում, երբ բախվում է կոմունիստական քայքայիչ սպառնալիքի կամ սովետական ագրեսիայի հետ։ Իրանը չպետք է ձեռնարկի սոցիալական այնպիսի համարձակ միջոցառումներ, ինչպիսին կալվածատիրական հողերի բռնագրավումն է և մեծ ձեռնարկությունների ազգայնացումը։ Առաջադիմությունը պետք է լինի պլանավորված, դանդաղ և հաստատուն։ Առավել ևս Իրանը չպետք է փոխի կամ տեղաշարժի իրեն ժառանգված ինստիտուտները, որոնք ներկայացնում են այն ամենը, ինչ պոզիտիվ է և արժանի ազգային մշակույթին»[1]։

Անսպասելի չէ, հետևաբար, որ ազգային բուրժուազիայի կառավարության նավթային քաղաքականությանն անդրադարձած իրանցի շատ հեղինակներ դատապարտում են Մոսադեղի տևական և համառ դիմադրությունը նավթային հարցի վճռման իմպերիալիստական ծրագրերի իրականացման փորձերին։ Իրանական բուրժուական պատմագրության ներկայացուցիչներից մեկը՝ Շամիմն, օրինակ, առավել նպատակահարմար համարելով հատկապես Միջազգային բանկի առաջարկը, անկեղծ ափսոսանք է հայտնում այն առթիվ, որ «...Մոսադեղի մտերիմներից և կողմնակիցներից շատերը Միջազգային բանկի առաջարկի ընդունումը անհամատեղելի գտան նավթարդյունաբերության ազգայնացման

---

[1] L. Binder. Iran. Political Development in a Changing Society, Berkeley and Los Angeles, 1962, p. 78.

սկզբունքի հետ... Ի վերջո, բանկի ներկայացուցիչները նավթին վերաբերող բոլոր հարցերում Իրանի կառավարության հետ չկարողացան փոխադարձ համաձայնության գալ...»[2]։

Շամիմը նավթարդյունաբերության ազգայնացումից հետո Իրանում ստեղծված տնտեսական և քաղաքական ծանր կացության հիմնական պատճառ է համարում Մոսադեղի վարած քաղաքականությունը[3], հասկանալիորեն անտեսելով այդ իրավիճակը հարուցող իսկական, ավելի քան հանրահայտ և անքողարկելի պարագաները՝ մասնավորաբար բոյկոտի ու ճնշման այն քաղաքականությունը, որ Իրանի նկատմամբ կիրառեցին անգլո-ամերիկյան իմպերիալիստները։

Իրանական բուրժուական որոշ հեղինակներ առիթ բաց չեն թողնում նաև նսեմացնելու Մոսադեղի կառավարության ներքին քաղաքականությունը, աղավաղելու երկրի հասարակական-քաղաքական ուժերի հետ նրա փոխհարաբերությունների իսկական բնույթը։ Նրանցից ոմանք այն կարծիքի են, որ ազգային բուրժուազիայի կառավարությունն իր քաղաքականությամբ, փաստորեն, պարարտ հող էր պատրաստում օտարերկրյա ներթափանցման համար և, ինչպես գրում է Մազանդարանին, «Մոսադեղի կառավարության տապալմամբ... Իրանում վերջ տրվեց օտարերկրյա ակտիվության հովանավորմանը...»[4]։

Այդ հեղինակների հետապնդած հիմնական նպատակներից մեկն էլ Իրանի նկատմամբ անգլիական և ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականության սքողումն է։ Անդրադառնալով նավթային վեճին, նրանք ջանում են իրադրությունն այնպես ներկայացնել, թե իբր հիշյալ երկրներն անկեղծորեն տրամադրված էին հարցը լուծել հօգուտ Իրանի, և նավթային խնդրի «կարգավորման» նրանց առաջարկած «ձեռնտու» պայմանների մերժումը Մոսադեղի կողմից ոչ այլ ինչ էր, եթե ոչ վերջիններիս նկատմամբ նրա անշնորհակալ վերաբերմունքի դրսևորում և, միաժամանակ, քաղաքականություն, որ «երկիրը տանում էր դեպի կործանում»[5]։

Ի դեպ, իրանցի բուրժուական հեղինակներից շատերին հատուկ է ոչ միայն օտարերկրյա, հատկապես ամերիկյան, իմպերիալիզմի իսկա-

---

[2] شمیم. ایران در دوره سلطنت اعلیحضرت محمد رضا شاه پهلوی. تهران ۱۹۶۵ ص. ۴۶

[3] Նույն տեղում, էջ 67։

[4] مازندرانی. نگاهی به زندگی رعایای دیروز و دهقانان امروز. گیلان ۵۳۳۱ ص. ۱۳۳۵

[5] *F. Sahebjam*, L'Iran vers l'an 2000 document, Paris, 1977, p. 188.

կան նպատակների քողարկումը, այլև նրանց Իրանի բարեկամ ներկայացնելու բացահայտ միտումը։

Ֆաթեհն, օրինակ, իր «Իրանի նավթի հիսուն տարին»[6] մեծածավալ աշխատության մեջ անդրադառնալով Իրանում ԱՄՆ-ի ետպատերազմյան քաղաքականությանն ընդհանրապես, վիճակն այնպես է պատկերում, որ, իբր, զիջելով իրանցիների թախանձանքներին, ամերիկյան «բարերարները» նրանց «օգնության ձեռք» մեկնեցին ճիշտ այնպես, ինչպես պատերազմի ավարտից հետո «մեծահոգաբար» «...մեծ աջակցություն ցուցաբերեցին իրենց դաշնակիցներին և, նույնիսկ, իրենց դեմ կռվող Գերմանիային, Ճապոնիային, Իտալիային»[7]։ Հայտնի է, սակայն, որ այդ ակտը բխում էր ոչ թե Միացյալ Նահանգների բարեգործ ձգտումներից, այլ Իրանին, ինչպես նաև մյուս երկրներին տնտեսապես և քաղաքականապես իրեն ենթարկելու նպատակից, նպատակ, որը նրան որոշ դեպքերում հաջողվեց իրականացնել։

Մեկ այլ առիթով, վերարտադրելով Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման ողջ ընթացքը, Ֆաթեհը ձգտում է հաստատել, որ իբրև Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների մղումները զուտ բարեկամական էին. «Այն օրից, երբ նավթի հանույթը դադարեցվեց, և Աբադանի նավթազտիչ գործարանը փակվեց,—գրում է նա,—Միացյալ Նահանգներն ամենայն ջանք գործադրեց Իրանին օգնելու, երկու կողմերի (Իրանի և Անգլիայի կառավարությունների—Ա. Ս.) միջև համաձայնության հասնելու համար։ Ամերիկայի նպատակն այն էր, որ Իրանը հնարավորին չափ շուտ վերականգներ նավթի եկամուտները...»[8]։

Դժվար չէ կռահել, որ Իրանի հանդեպ Միացյալ Նահանգների քաղաքականության այսպիսի գովերգումը ինքնանպատակ չէ և այլ դիտավորությունների հետ միասին նաև նպատակ ունի ժխտել նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի իրականացումից հետո Իրանում ճգնաժամային վիճակի ստեղծման մեջ ԱՄՆ-ի որևէ առնչությունը և փորձում է մեղքն ամբողջովին բարդել Մոսադեղի վրա։ Մանավանդ, երբ հնարավոր է բերել հավաստիանման այնպիսի փաստարկներ, ինչպես, ասենք, ազգայնացված նավթի դյուրին սպառման հնարավորության Մոսադեղի համոզվածության անհիմն լինելը[9], կամ այն, որ «նավթար-

---

[6] فاتح پنجاه سال نفت ایران" تهران ۱۳۳۰

[7] Նույն տեղում, էջ 495։

[8] Նույն տեղում, էջ 636։

[9] Նույն տեղում, էջ 523։

«յունաբերության ազգայնացման օրենքը կազմվել էր հապճեպ, առանց գործի շահերը հաշվի առնելու»[10] և այլն։

Ինքնատիպ է Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականության Ռուհանիի մեկնաբանությունը[11]։ Ընդունելով, որ Միացյալ Նահանգները նավթային խնդրի վճռման գործում Իրանին չօգնեց (սակայն չի ակնարկում այն մասին, որ նա Իրանին նաև մեծ չափով խանգարեց), Ռուհանին, այնուամենայնիվ, փորձում է գտնել ԱՄՆ-ի այդ դիրքորոշումն արդարացնող պատճառաբանություններ։ «Միացյալ Նահանգները,—գրում է նա,—միշտ թույլ երկրների կողմն է եղել։ Հատկապես Իրանի նկատմամբ նա ցուցաբերել է անփոփոխ բարյացակամություն, և երբևէ չի զլացել բոլոր միջոցներով օգնել և աջակցել նրան։ Այս անգամ, սակայն (նավթի ազգայնացման հարցում—Ա. Ս.) Անգլիայի հետ նրանց (Անգլիայի և Ամերիկայի ժողովուրդների—Ա. Ս.) ծագումնային, լեզվական, մշակութային, քաղաքական և տնտեսական կապերի ընդհանրությունն ու սերտությունը պատճառ դարձան, որ նա հանդես գա որպես Անգլիայի կողմնակից»[12]։

Ռուհանին այս հանգամանքը համարում է միանգամայն բնական, օրինաչափ և, հետևաբար, նաև՝ ներելի։ Նա նույնքան տրամաբանական և հասկանալի է համարում նաև Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի նման դիրքորոշման մեկ այլ ծանրակշիռ դրդապատճառ, այն է՝ Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման ակտին ծայրահեղ բացասաբար տրամադրված համաշխարհային նավթային հզոր կարտելներին Միացյալ Նահանգների հակադրվելու վտանգավորությունը[13]։

Ընդունելով, նույնիսկ, որ ԱՄՆ-ի այդպիսի դիրքորոշումը հետագայում էական նշանակություն ունեցավ ազգային բուրժուազիայի կառավարության տապալման գործում[14], Ռուհանին, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի քաղաքականությունն Իրանի նկատմամբ չի ընդունում որպես Իրանի ներքին գործերին կոպիտ միջամտություն, որպես, իրոք, իմպերիալիստական քաղաքականություն։

Միացյալ Նահանգների քաղաքականության իմպերիալիստական էությունը չմբռնելու կամ այն դիտավորյալ սքողելու, ինչպես նաև Իրանի նկատմամբ նրա իսկական ակնկալությունները մեղմելու նույն

---

10 بهنیا. پرده‌های سیاست‌نفت‌مصدق زاهدی تهران ص ۷۰

11 روحانی. تاریخ ملی شدن صنعت نفت ایران" تهران ۱۳۵۳

12 Նույն տեղում, էջ 128։

13 Նույն տեղում, էջ 149։

14 Նույն տեղում, էջ 173։

միտումներով, Ռուհանին Իրանի անկեղծ բարեկամ է ներկայացնում Միացյալ Նահանգների քաղաքական առանձին գործիչների, մասնավորաբար Իրանում ամերիկյան դեսպան Հենրի Գրեյդիին[15], այն դեպքում, երբ նրա ողջ գործունեությունն Իրանում այլ բան չէր, քան Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականության անմիջական իրականացում։

Բոլոր դեպքերում, այստեղ արդեն չեն հնչում սովորական դարձած այն պնդումներն ու հավաստիացումները, թե նավթարդյունաբերության ազգայնացման առիթով Իրանի և Անգլիայի միջև ծագած նավթային վեճում Միացյալ Նահանգները միանգամայն անկողմնակալ, համեստ միջնորդ էր և շահագրգռված էր միայն վեճի օբյեկտիվ ելքով։ Այսպիսով, Ռուհանին փաստորեն հրաժարվում է նաև բուրժուական պատմագրության մեջ դարձյալ չափազանց տարածված այն տեսակետից, թե նավթային պրոբլեմի լուծման մեջ Միացյալ Նահանգները չուներ իր մասնավոր հետաքրքրություններն ու շահերը, որ իբր Անգլիան էր, որ նրան ենթարկեց իր ազդեցությանն ու տրամադրեց ազգային բուրժուազիայի կառավարության դեմ։

Ընդգծված պրոռեակցիոն ուղղվածություն ունի Արսանջանիի «Նոթեր թիրի* 30-ի քաղաքական իրադարձությունների մասին» գիրքը[16]։

Չնայած գրքի զուտ նկարագրական բնույթին և դեպքերի ու իրադարձությունների լուրջ վերլուծության իսպառ բացակայությանը, այն սկզբից մինչև վերջ թշնամանքով է ներծծված Մոսադեղի ու նրա կառավարության հանդեպ և ներբողում է հայտնի ռեակցիոներ Ղավամ էս Սալթանեին և նրան հովանավորող շրջաններին։

Ինչպես և հետևում է վերնագրից, հեղինակի հիշողությունները վերաբերում են 1952 թ. հուլիսին Իրանում ծավալված կարճատև, սակայն բուռն իրադարձություններին, երբ Մոսադեղին ասպարեզից հեռացնելու և նրան Ղավամով փոխարինելու տեղական ռեակցիայի և օտարերկրյա իմպերիալիստների համատեղ փորձը ձախողվեց, և շնորհիվ ժողովրդական լայն զանգվածների անձնազոհ պայքարի, ազգային բուրժուազիայի կառավարությունը երեք օր անց վերագրավեց իշխանությունը։

Դեպքերի ու իրադարձությունների ականատեսի, ինչ-որ չափով նաև

---

[15] Նույն տեղում, էջ 169։

* Թիրը տարվա չորրորդ ամիսն է, ըստ պարսկական տոմարի։ Թիրի 30-ը համապատասխանում է հուլիսի 21-ին։

[16] ارسنجانی. یادداشتهای سیاسی سی‌ام تیر" ۱۳۴۱

մասնակցի և նրանց անկողմնակալ վերարտադրողի հավակնությամբ, Արսանջանին, իրականում, ամենաբացահայտ կերպով նենգափոխում է իրականությունը։ Նա չանում է ժխտել Ղավամի դեմ ծավալված շարժման ժողովրդական բնույթը։ Նա գրում է. «Թեհրանի բնակչությունը թիրի 30-ին (հուլիսի 21-ին—Ա. Ս.) և հաջորդ օրերին գտնվում էր այն անձանց ուժեղ ագիտացիայի ազդեցության տակ, ովքեր այդ իրադարձություններից շահ ունեին...»[17]։ Եվ ապա. «...Իրոք, ինչպիսի հանցանք թույլ տվեցին այն մարդիկ, ովքեր զանգվածների գրգռվածությունն օգտագործեցին լոկ իրենց անձնական հաշիվները մաքրելու համար և անարդարացիորեն իրենց փառասիրական ձգտումներին հասնելու համար ամեն տեսակ լուտանքներ տեղացին մի մարդու վրա (Ղավամ էս Սալթանեի—Ա. Ս.), որն իր ողջ կյանքում ծառայել էր երկրին, և երկրի այն փոքրաթիվ հարգարժան և վաստակաշատ գործիչներից էր, որոնց նմանը դժվար է գտնել»[18]։

Ազգային բուրժուազիայի կառավարությանը վարկաբեկելու և նրա քաղաքականությունն ամեն կերպ նսեմացնելու բացահայտ նպատակ է հետապնդում Մալեքին, իր «Ազգային ճակատի» համառոտ պատմությունը» գրքում[19]։ Դիտավորյալ չափազանցելով կառավարության գործունեության թերի կողմերը, Մալեքին այն համոզմունքն է հայտնում, որ «Ազգային ճակատի» կողմից պրեմիեր մինիստրի պաշտոնի համար Մոսադեղի թեկնածության առաջադրումը ճակատագրական և աններելի սխալ էր, քանի որ, ինչպես ցույց տվեց մոտիկ ապագան, «երկերեսանի, դեմագոգ և կարիերիստ»[20] Մոսադեղն իր իշխանության ողջ շրջանում ոչ միայն «Իրանի ժողովրդի հանգստի ու բարեկեցության ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկեց»[21], այլև իր քաղաքականությամբ երկրի վիճակի վատթարացման պատճառ դարձավ ու վտանգի մատնեց նրա անկախությունը։

Քննելով Մոսադեղի և «Ազգային ճակատի» մյուս լիդերների փոխհարաբերությունները, -Մալեքին Մոսադեղի հետ նրանցից շատերի տարաձայնությունների և կապերը խզելու հանգամանքը հիմնականում հետևանք է համարում Մոսադեղի արատավոր, անմիտ, նաև «դիկտատորական» քաղաքականության։

---

17 Նույն տեղում, էջ 5։
18 Նույն տեղում, էջ 7։
19 ۱۳۳۲ تاریخچه جبهه ملی. ملکی
20 Նույն տեղում, էջ 29։
21 Նույն տեղում, էջ 64։

Իրանցի հեղինակներից շատերը փորձում են սքողել ազգային բուրժուազիայի կառավարության տապալման էական պատճառները և որոշակի նպատակներով դրանք փոխարինում են տապալմանը նպաստած երկրորդական կամ շինծու հանգամանքներով։ Այս հեղինակների դիտավորությունը միշտ նույնն է՝ ամեն կերպ քողարկել Մոսադեղի կառավարության տապալման գործում տեղական ռեակցիայի և օտարերկրյա իմպերիալիստների հսկայական, որոշիչ դերը։

Պնդվող տեսակետներից մեկն այն է, որ Մոսադեղի թույլ տված ամենամեծ սխալը և, միաժամանակ, ազգային բուրժուազիայի կառավարության տապալման ամենահիմնական պատճառը Մոսադեղի կողմից նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի իրականացումն էր։ Մոսադեղի կառավարության տապալման այս վարկածը, որն ամենից հաճախ է արտահայտվում թե՛ իրանական և թե՛ օտարերկրյա բուրժուական պատմագրության մեջ և թույլ է տալիս ճարպկորեն շրջանցել կառավարության տապալման իսկական հեղինակներին, անշուշտ, միակը չէ։

Քննելով ազգային բուրժուազիայի կառավարության տապալման հանգամանքները, իրանցի հեղինակներն այն հիմնականում պատճառաբանում են նաև Մոսադեղի կառավարության արտաքին և ներքին ոչ ճիշտ քաղաքականությամբ։ Մազանդարանին, օրինակ, կառավարության տապալումն արդյունք է համարում նրա գործունեությունից դժգոհ ժողովրդական զանգվածների հակակառավարական շարժման[22]։

Նույնն է ակնարկում նաև Բեհնիան. հիշեցնելով, որ Մոսադեղն իշխանության էր հասել ժողովրդական զանգվածների աջակցությամբ, և որ կառավարման ողջ շրջանում երկրի ներքին կյանքի որևէ բնագավառում նրա քաղաքականությունը հաջողության չէր հասել, Բեհնիան եզրակացնում է, որ «... նրա կարիերիզմը, փառասիրությունը և էգոիզմը պետք է, որ վատ հետևանքներ ունենային, և ... նրա տապալումը ևս պետք է կատարվեր այն դասակարգերի ձեռքով, որոնք նրան մշտապես հովանավորում էին...»[23]։

Հետաքրքրական է ազգային բուրժուազիայի կառավարության նավթային քաղաքականության անհաջողության Ռուհանիի վերսիան։ Չհրաժարվելով բուրժուական պատմագրության մեջ ընդունված սկզբունքից, այն է՝ մեղքը միշտ և բոլոր դեպքերում բարդել միայն Մոսադեղի «արա-

---

[22] مازندرانی նշվ. աշխ., էջ 112։

[23] بهنیا նշվ. աշխ., էջ 89։

տավոր» քաղաքականության վրա, Ռուհանին վիճակն ինչ-որ չափով մեղմում է, այս անգամ արդեն նավթային ֆիասկոյի հիմնական պատճառ համարելով ուղղակի Մոսադեղի կողմից ցանկալին իրականի հետ շփոթելը[24], մասնավորաբար նրա այն ակնկալության անիրականանալի լինելը, թե Միացյալ Նահանգները նավթային վեճում հանդես կգա ի պաշտպանություն Իրանի։

Սակայն իրանցի առանձին հեղինակներ, որոնք ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակաշրջանին վերաբերող հարցերը հիմնականում մեկնաբանում ու գնահատում են դարձյալ նույն՝ հակամոսադեղյան ոգով, այսուհանդերձ, ժամանակ առ ժամանակ հակված են իրադրությունը ներկայացնել բավական անկողմնակալորեն։ Բեհնիան, օրինակ, ճշմարտացիորեն է պատկերում Մոսադեղի կառավարության նկատմամբ արքունիքի վերաբերմունքը։ «Արքունիքը Մոսադեղի կառավարության հանդեպ բացահայտորեն լավ չէր տրամադրված,—գրում է Բեհնիան,—և նրան (պրեմիեր մինիստր—Ա. Ս.) նշանակելիս այն հույսն ուներ, որ նա շուտափույթ կերպով կտապալվի և քաղաքական ասպարեզից ընդմիշտ կհեռանա...»[25]։ Բեհնիան, հիմնականում, ճիշտ է ներկայացնում նաև Իրանի նկատմամբ օտարերկրյա իմպերիալիզմի իսկական նպատակները։ Սակայն, այնուամենայնիվ, չկարողանալով թաքցնել իր պրոամերիկյան հակումները և ջանալով մեղմել Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների բացահայտ էքսպանսիոնիստական ձգտումները, Բեհնիան իրերի դրությունն այնպես է պատկերում, թե Միացյալ Նահանգներն Իրանի նկատմամբ իր քաղաքականությունն իրականացնելիս գործում էր Անգլիայի դրդմամբ[26]։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Նիրումանդի «Իրան. Նոր իմպերիալիզմը գործողության մեջ»[27] ուսումնասիրությունը, որն ընդգծված հակաիմպերիալիստական ուղղվածություն ունի։ Նիրումանդը լուսաբանում է Իրանում անգլիական և ամերիկյան իմպերիալիստական քաղաքականության պատմությունը և հանգում այն եզրակացության, որ այդ քաղաքականությունը միշտ և բոլոր դեպքերում, իր ամենաբազմազան դրսևորումներում եղել է և է էքսպանսիոնիստական, գաղութարարական և շահագործողական և, վերջ ի վերջո, պատճառ է դարձել երկրի

---

[24] رومانی նշվ. աշխ., էջ 168։

[25] بینیا նշվ. աշխ., էջ 66։

[26] Տե՛ս նույն տեղում, էջ 82։

[27] *B. Nirumand*, Iran the New Imperialism in Action, N. Y., 1962.

տնտեսության քայքայման, տնտեսական և քաղաքական ինքնուրույնության կորստի և հետադիմության։

Որպես այդ կործանարար քաղաքականության լավագույն օրինակ, Նիրումանդը ներկայացնում է Իրանի հիմնական հարստության՝ նավթի կողոպտման պատմությունը նախ՝ Անգլո-իրանական նավթային ընկերության և ապա՝ Միջազգային կոնսորցիումի կողմից։

Աշխատանքում կարևոր տեղ է հատկացված Իրանին տրամադրվող օտարերկրյա «օգնության» էության բացահայտմանը։ Վերլուծելով իմպերիալիստական «օգնության» բոլոր արտահայտություններն ու հետևանքները և բացատրելով դրա մեխանիզմի ոչ բարդ տրամաբանությունը, Նիրումանդն, ի վերջո, հաստատում է, որ այդ «օգնությունը» իմպերիալիստական երկրների կողմից թույլ զարգացած երկրների և մասնավորաբար Իրանի շահագործման բավական ինտենսիվ մի տարատեսակ է, որն անընդհատ կարող է կերպարանափոխվել, բայց իր էությամբ մնալ միշտ նույնը։

Նիրումանդի գրքում արծարծված մյուս կարևոր խնդիրը իմպերիալիստական քաղաքականության հանդեպ թույլ զարգացած երկրների, հատկապես Իրանի տիրող շրջանների դիրքորոշման հարցն է։ Նիրումանդը գալիս է այն վերջնական համոզման, որ Իրանում օտարերկրյա իմպերիալիզմի անսահմանափակ, անարգել տեր ու տնօրինությունն ու ընդարձակ գործունեությունը տարիներ շարունակ հնարավոր է եղել միմիայն շնորհիվ տեղական ռեակցիոն շրջանների և անձամբ շահի հանդուրժող և մասամբ նաև խրախուսող քաղաքականության։

Աշխատանքում արտացոլված է իմպերիալիստական տերությունների ճնշմանն ու շահագործմանը ենթարկվող երկրներում աճող ազգային ինքնագիտակցությունն ու անկախություն նվաճելու ձգտումը։ 40-ական թվականների վերջերին Իրանում մեծ թափով ծավալված հակաիմպերիալիստական պայքարն ու ազգային բուրժուազիայի կառավարության ստեղծումը Նիրումանդը գնահատում է որպես ազգային գիտակցության ծնունդ և օտարերկրյա իմպերիալիզմի դեմ դիմադրության ոգու հաղթանակ։ Նա առանձին համակրանքով է ներկայացնում Մոսադեղի կառավարության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը, ցույց է տալիս, որ այն անժխտելիորեն ուղղված էր երկրի վիճակի բարվոքմանը, տնտեսական և քաղաքական անկախության ձեռքբերմանը։

Նիրումանդն իր գրքում ընդարձակ տեղ է հատկացնում ազգային բուրժուազիայի կառավարության տապալման գործում օտարերկրյա,

հատկապես ամերիկյան իմպերիալիզմի վճռական ու որոշիչ դերի բացահայտմանը։

Մոսադեղի կառավարության տապալումը նա գնահատում է իբրև ազգային ողբերգություն։

Նիրումանդի այս աշխատանքը, սակայն, զերծ չէ լուրջ թերություններից։ Որպես Իրանի ազգային բուրժուազիայի շահերի արտահայտիչ և նրա երկրպագու, նա փաստորեն անտեսում է իրանական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման մեջ ժողովրդական լայն զանգվածների հակաֆեոդալական, հակաիմպերիալիստական պայքարը և այն կազմակերպող ու նրան ճիշտ ուղղվածություն տվող առաջադիմական կազմակերպությունների հսկայական դերը։

Դրվատելով այն մոլի վճռականությունը, որով Մոսադեղն իշխանության ողջ շրջանում դիմադրում էր անգլիական ճնշումներին և ջանում էր իրականացնել նավթարդյունաբերության ազգայնացման օրենքը, Նիրումանդն ամենևին չի հիշատակում իմպերիալիստական մեկ այլ տերության՝ Միացյալ Նահանգների նկատմամբ Մոսադեղի լավատեսական տրամադրվածությունն ու վարանոտ, անհամարձակ քաղաքականությունը, որն ինչ-որ տեղ ճակատագրական եղավ ազգային բուրժուազիայի կառավարության համար։

* *
*

Հիմնականում Իրանում տիրող իրադրության, ազգային բուրժուազիայի կառավարության և օտարերկրյա տերությունների փոխհարաբերությունների, ինչպես նաև կառավարության ողջ քաղաքականության խեղաթյուրմամբ և նրանց ծայրահեղ միտումնավոր մեկնաբանությամբ են բնութագրվում նաև ամերիկյան բուրժուական հեղինակների այն աշխատանքները, որոնցում այս կամ այն չափով արծարծված է ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակահատվածը[28]։

Ամերիկացի հեղինակներին նախ և առաջ բնորոշ է մի ընդհանուր ձգտում. Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականությունն

---

[28] *D. N. Wilber*, Contemporary Iran, N. Y, 1963; *D. N. Wilber*, Iran Past and Present. Princeton, 1976; *R. N. Frye*, Iran, London, 1963; *Y. M. Upton*, The History of Modern Iran an Interpretation, Cambridge, 1961; *L. Binder*, Political Development in a Changing Society, Berkely—Los-Angeles, 1962; *R. W. Cottam*, Nationalism in Iran, Pittsburg, 1964; *Sh. Klebanoof*, Middle East Oil and U. S. Foreign Policy, N. Y., 1974; *E. P. Hoyt*, The Shah Mohammed Reza Pahlavi. The glittering Story of Iran and its People, N. Y., 1976.

ամեն կերպ հակադրել Անգլիայի քաղաքականությանը, ԱՄՆ-ը ներկայացնել որպես Իրանի բարեկամ և հովանավոր։ Անդրադառնալով Անգլիայի և Իրանի միջև ծագած նավթային վեճին Միացյալ Նահանգների միջամտությանը, նրանք միաձայն հերքում են վերջինիս որևէ շահագրգռությունն այդ հարցում։ Հետաքրքրական է, որ ամերիկյան պատմագիրներից մեկը՝ Շ. Կլեբանոֆը, այնուամենայնիվ, ակամա խոստովանում է, որ «հենց որ Մեծ Բրիտանիան խզեց հարաբերություններն Իրանի հետ, Միացյալ Նահանգների կառավարությունն ակտիվացրեց իր միջամտությունն Իրանի նավթային գործերին։ Եթե Միացյալ Նահանգների դիվանագիտական ջանքերը չօգնեցին նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի չեղյալ հայտարարմանը և ԱԻՆԸ-ի Իրանի նավթային օպերացիաներում իր նախկին դիրքերին վերադառնալուն, նրանց, անկասկած, հաջողվեց դռները բացել Միացյալ Նահանգների նավթային ընկերությունների համար՝ մաս ունենալու իրանական ռեսուրսների շահագործումից»[29]։

Ամերիկացի հեղինակներին նույնքան բնորոշ է նաև բարեգործական նպատակներ վերագրել ամերիկյան հանրահայտ «օգնությանը», որի իսկական դիտավորություններն ավելի քան բացորոշ էին։

Դեռևս 1947 թ. հրապարակվել էր այսպես կոչված «Տրումենի դոկտրինան»[30], որը Մերձավոր և Միջին Արևելքի երկրները ներթափանցելու ԱՄՆ-ի մշակած բազմազան ծրագրերից մեկն էր։ Այն նպատակ ուներ կարիքավոր, թույլ զարգացած երկրներին դրամական օժանդակություն տրամադրելու միջոցով վերջիններիս վրա տնտեսական ու քաղաքական հսկողություն սահմանել և, միաժամանակ, այդ երկրները ծառայեցնել իր հակասովետական մտադրությունների իրականացմանը։ Անշուշտ, «Տրումենի դոկտրինայի» կիրառման համար չափազանց հարմար ասպարեզ էր նաև Իրանը։

Նույնանման նպատակներ էր հետապնդում նաև «Չորրորդ կետի» ծրագիրը, որն ամերիկյան իմպերիալիստական քաղաքականության փառաբանիչների կողմից լայնորեն պրոպագանդվում էր որպես Իրանը և տնտեսական կարիք ունեցող մյուս երկրները աղքատությունից փրկելու լավագույն միջոց օգնության և «ամերիկյան բարիդրացիական ավանդույթի լավագույն արտահայտություն»[31]։

---

[29] *Sh. Klebanooff*, նշվ. աշխ., էջ 86։

[30] U. S. and Soviet Policy in the Middle East 1945—56, N. Y., 1972. p. 32.

[31] *W. E. Warne*, Mission for Peace. Point 4 in Iran, N. Y., 1965, p. 18.

1949 թ. հունվարի 20-ին պրեզիդենտի պաշտոնը գրավելու կապակցությամբ արտասանած ճառում Տրումենը, բացատրելով «Չորրորդ կետի» էությունը, ասաց. «Մենք (Ամերիկայի Միացյալ Նահանգները— Ա. Ս.) պետք է ձեռնամուխ լինենք մեր գիտական նվաճումների և արդյունաբերական առաջադիմության առավելությունները հետամնաց շրջանների բարելավման ու զարգացման համար օգտագործելու նոր, համարձակ ծրագրին... Մենք պետք է խթանենք կապիտալ ներդրումներն այն շրջաններում, որոնք զարգացում են պահանջում»[32]։

Բնութագրելով հատկապես Իրանի համար «Չորրորդ կետի» ծրագրի նշանակությունը, Իրանում այդ ծրագրի իրականացման ղեկավար Վ. Ուտրնը գրում է, որ այն «...պետք է օգնի Իրանի ժողովրդին բարելավելու իր կյանքը...»[33]։

Իրանում Միացյալ Նահանգների չափազանց ակտիվ գործունեության իսկական նպատակները քողարկելու միտումով, ամերիկացի հեղինակները հաճախ են դիմում «կոմունիստական աճող սպառնալիքի» իմպերիալիստների իսկ հորինած հանրահայտ թեզին, և Իրանի ներքին գործերին Միացյալ Նահանգների բացահայտ միջամտությունը փորձում են ներկայացնել միայն որպես Իրանը «կոմունիստական վտանգից» փրկելու «ազնիվ միսիայի» իրագործում։

Ամերիկացի հիշատակված հեղինակների աշխատանքներում, որպես կանոն, տնտեսական և վարչական բնագավառներում ազգային բուրժուազիայի կառավարության գործունեությունը կա՛մ ընդհանրապես անտեսվում է, կա՛մ էլ, լավագույն դեպքում, գնահատվում է որպես արատավոր միջոցառումների մի ամբողջություն, որն է՛լ ավելի վատթարացրեց երկրի ճգնաժամային վիճակը։

Թաքցնելով Մեջլիսում պրոամերիկյան կողմնորոշման դեպուտատների մշտական հակակառավարական գործունեության իսկական դրդապատճառները, ամերիկյան բուրժուական պատմագրությունն այն, գլխավորապես, հետևանք է համարում ազգային բուրժուազիայի կառավարության անօրինական, սահմանադրությանը հակասող գործողությունների։

Իրադրության նման պատկերումը, անտարակույս, մեծապես պայմանավորված էր նաև նույն՝ Իրանում ստեղծված տնտեսական և քաղաքական աննպաստ վիճակը միշտ և միմիայն Մոսադեղի քաղաքա-

---

[32] Report of a Study of United States Foreign aid in Ten Middle Eastern and African Countries. Washington, 1863, p. 27.

[33] *W. E. Warne*, նշվ. աշխ., էջ 27։

կանության առանձնահատկություններով բացատրելու միտումով, որը լավագույն ձևով ներկայացված է Լ. Բինդերի հետևյալ արտահայտությամբ. «Նրա (Մոսադեղի—Ա. Ս.) հաջողություններն ու անհաջողությունները բխում էին նրա եզակի անձնական հատկանիշներից և նրա հատուկ ունակություններից»[34]։

Ամերիկացի հեղինակների ուսումնասիրություններում շահի նկատմամբ Մոսադեղի վերաբերմունքը գերակշռարար մեկնաբանվում է որպես մի քաղաքականություն, որի վերջնական նպատակն, իբրև թե, երկրում հանրապետություն հաստատելու նրա դիտավորության իրականացումն էր։ Դ. Վիլբերն, օրինակ, ուղղակի գրում է. «...1951 թ. ապրիլի 29-ից մինչև 1953 թ. օգոստոսի 19-ը դոկտոր Մոսադեղը պրեմիեր մինիստր էր և իր մյուս գործողություններին զուգահեռ կայուն կամպանիա էր մղում միապետության դեմ... Անկասկած, նրա վերջնական նպատակն Իրանում հանրապետության հաստատումն էր, և նա շարժվում էր դեպի այդ նպատակը՝ քայքայելով թագավորական իշխանությունը...»[35]։ «Այն պահանջը, որ շահը պետք է թագավորի և ոչ թե իշխի, որը հուչակվել էր Մոսադեղի օրոք,—գրում է Լ. Բինդերը,—իրականում այլ բան չէր, քան առաջին քայլը հանրապետականության կամ դիկտատուրա հաստատելու ուղղությամբ»[36]։

Անդրադառնալով Մոսադեղի և Իրանի ժողովրդական կուսակցության (ԻԺԿ կամ Թուդե) փոխհարաբերություններին, այդ հեղինակները Մուսադեղին մեղադրում են ԻԺԿ-ի նկատմամբ չափազանց մեղմ վերաբերմունքի և նրա գործունեության համար երկրում բարենպաստ պայմաններ ստեղծելու մեջ։

Օգտագործելով ազգային բուրժուազիայի կառավարության նկատմամբ ԻԺԿ-ի դիրքորոշման բազմաբնույթ և հաճախ իրոք հակասական դրսևորումների փաստը, նրանք առաջ են քաշում ծայրահեղ, երբեմն միմյանց հակադիր տեսակետներ։

Առավել տարածված է ժողովրդական կուսակցությունը Մոսադեղի կառավարության հիմնական աջակից և հովանավոր ներկայացնելու հակումը։ Դ. Վիլբերն, օրինակ, գրում է. «Ջնայած Թուդե կուսակցությունը պաշտոնապես ընդդիմադիր էր Մոսադեղի կառավարությանը,

---

[34] *L. Binder*, նշվ. աշխ., էջ 113։

[35] *L. Binder*, Iran's Potential as a Regional Power (Political Dynamics in the Middle East N. Y., 1972.

[36] Նույն տեղում, էջ 361։

ակայն իր հմինական ջանքերն ուղղել էր օգնելու նրա՝ իշխանության գլուխ մնալուն»։ «...Մոսադեղն իր իշխանության վերջին ամիսներին... ավելի մեծ կախման մեջ ընկավ Թուդեի աջակցությունից»[38],—*գրում է Լ. Բինդերը։*

ԻԺԿ-ի և Մոսադեղի փոխհարաբերությունների հենց այս կողմի դիտավորյալ չափազանցումն ու ընդգծումը պատահական չէ, քանի որ այն օգնում է դյուրացնելու մեկ այլ, դարձյալ հաճախ արտահայտվող կարծիքի հաստատումը, թե իր իշխանության շրջանում Մոսադեղը գտնվում էր ժողովրդական կուսակցության ազդեցության տակ և գործում էր նրա թելադրանքով։

Հետաքրքրական է, որ ամերիկացի որոշ հեղինակներ հավասարապես փորձում են ժողովրդական կուսակցությունը ներկայացնել որպես կառավարությանը թշնամի և նրա դեմ գործող ուժ։ Նույն Վիլբերը, նշելով, որ Մոսադեղի օրոք երկրում ստեղծված մթնոլորտը չափազանց նպաստավոր էր հատկապես զինված ուժերի շրջանում ԻԺԿ-ի գործունեության ակտիվացման համար, այն միտքն է հայտնում, որ այդ կուսակցության նպատակն, ի վերջո, թուդեական սպաների կազմակերպության և կուսակցության երիտասարդական խմբերի միջոցով Մոսադեղին մեջտեղից վերացնելն էր, այն բանից հետո, երբ վերջինիս կհաջողվեր Իրանում վերջ դնել միապետությանը[39]։

Զգտելով սքողել Իրանում հակակառավարական հեղաշրջման կազմակերպման և իրականացման մեջ Միացյալ Նահանգների գործունյա մասնակցությունն ու որոշիչ դերը, ամերիկացի հեղինակները չեն զլանում հորինել ազգային բուրժուազիայի կառավարության տապալման ամենատարբեր վարկածներ. մի դեպքում, իբր Մոսադեղին անկման հասցրեց նրա ոչ խելամիտ ներքին քաղաքականությունը[40], *մեկ այլ դեպքում, իբր Մոսադեղը զոհ դարձավ «նեգատիվ նացիոնալիզմի շրջանակներում կոնստրուկտիվ նպատակների բացակայության»*[41], *իսկ ավելի հաճախ շեշտը դնում են իշխանության վերջին շրջանում Մոսադեզի և շահի փոխհարաբերությունների վատթարացման վրա*[42], *որպեսզի հաստատվի այն ենթադրությունը, թե Մոսադեղի կառավարությունը*

---

37 *D. N. Wilber,* Նշվ. աշխ., էջ 143։

38 *L. Binder,* Political Development in a Changing Society, p. 146.

39 *Տե՛ս D. N. Wilber,* Նշվ. աշխ., էջ 143։

40 *L. Binder,* Նշվ. աշխ., էջ 114։

41 *D. N. Wilber,* Նշվ. աշխ., էջ 96։

42 *Y. M. Upton,* Նշվ. աշխ., էջ 102։

տապալվեց զուտ ներքին ուժերի ջանքերով։ Նույն նպատակն է հետապնդում նաև Ֆրայը, նշելով, որ «...Զահեդին բանակի աջակցությամբ ճնշեց դիմադրությունը և օգոստոսի 19-ին գրավեց իշխանությունը»[43]։

Ամերիկյան հեղինակներն, իհարկե, հաճախ տեղական օպոզիցիայի գործընկեր են ներկայացնում նաև անգլիական իմպերիալիզմին, պնդելով, որ օգոստոսյան հակակառավարական հեղաշրջումն իրականացվեց նրանց համատեղ ջանքերով՝ կրկին բացառելով Միացյալ Նահանգների որևէ առնչությունն այդ ակտին։ Չկարողանալով, երբեմն էլ, բոլորովին ժխտել հեղաշրջմանը Միացյալ Նահանգների ակտիվ միջամտության չափազանց ակնհայտ և բազմիցս ապացուցված փաստը, ամերիկյան բուրժուական հեղինակները փորձում են դա բացատրել այն հանգամանքով, որ, իբրև, Միացյալ Նահանգներն այդ հարցում գտնվում էր Անգլիայի քաղաքական ազդեցության տակ և գործում էր նրա թելադրանքով։

Գաղտնիք չէ, որ ամերիկյան իմպերիալիզմն Իրանի նկատմամբ ուներ իր սեփական, հեռուն գնացող ծրագրերը, և, անտարակույս, ավելի քան միամիտ է նրա գործողությունները բացատրել որպես հետևանք այն բանի, որ նա գործիք էր դարձել իր անհամեմատ թույլ գործակցի՝ Անգլիայի, ձեռքին։

* *
*

Հետաքրքրվելով անգլո-իրանական նավթային վեճի ընթացքով և դրան հարակից պրոբլեմներով (որոնք, ի դեպ, հիմնականում մեկնաբանվում են սուբյեկտիվորեն), անգլիական բուրժուական պատմագրությունը սակավ է անդրադարձել ազգային բուրժուազիայի կառավարության քաղաքականության մյուս կողմերին[44]։

Ժխտելով Իրանում Անգլո-իրանական նավթային ընկերության կողոպտիչ գործունեությունը և այն ներկայացնելով սոսկ որպես առևտրական՝ Իրանին տնտեսապես ձեռնտու և, միաժամանակ, բարերար ու քաղաքակրթչական միսիա իրականացնող ձեռնարկություն, անգլիացի հեղինակները մեծ մասամբ ձգտում են այն տպավորությունն ստեղծել,

---

[43] *R. N. Frye*, Նշվ. աշխ., էջ 107։

[44] *J. Marlowe*, Iran, London, 1963; *P. Avery*, Modern Iran, N. Y.—Washington, 1965; *S. N. Fisher*, The Middle East. A History, London, 1971; *L. P. Elwell-Sutton*, Persian Oil. A Study of Power Politic, London, 1955. *R. Graham*, Iran the Illusion of Power, London, 1978.

թե նրա լուծարքումով վնասվեցին Իրանի իսկ շահերը։ Այս տեսակետի իրավացիությունը հաստատելու դիտավորությամբ վերջիններս ամեն առիթով հիշեցնում և թվարկում են այն հայտնի հանգամանքներն ու գործոնները, որոնք, ըստ նրանց, առկա պայմաններում նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի իրականացումը գործնականում դարձնում էին ոչ նպատակահարմար և, նույնիսկ, անիրականանալի։ «Մոսադեղը,—գրում է Ս. Ֆիշերը,—...հուսադրում էր իրանցի հասարակ ժողովրդին, թե նավթային արդյունաբերությունից ստացվող եկամուտները (ի նկատի ունի ազգայնացված նավթարդյունաբերությունը—Ա. Ս.) նրանց հանգիստ և բարեկեցիկ կյանքի հնարավորություն կտան։ Սակայն նա չէր գիտակցում առանց միջազգային նավթարդյունաբերության կամ համաշխարհային համագործակցության նավթի վաճառքի դժվարությունները։ Ավելին, նա հաշվի չէր առել այն հանգամանքը, որ հարևան երկրները՝ Իրաքը, Քուվեյթը և Սաուդյան Արաբիան կառարկեին, եթե նավթային ընկերությունները Իրանի նավթի համար պահանջարկ ապահովելու նպատակով սահմանափակեին արտադրանքը նրանց տերիտորիաներում։

Մոսադեղը հավատում էր, որ Բրիտանիան և Արևմտյան Եվրոպան իրենց տնտեսության զարգացման համար իրանական նավթի կարիքն են զգում և այդ իսկ պատճառով պետք է ջանան ձեռք բերել այն։ Նա նաև հույս ուներ, որ ԱՄՆ-ը կպաշտպաներ Իրանին ԱԻՆՀ-ի դեմ նրա պայքարում...»[45]։

Իրանի գործերին անգլիական և ամերիկյան իմպերիալիստների միջամտությունն ընդհանրապես հերքելու նպատակով անգլիացի հեղինակներն ազգային բուրժուազիայի կառավարության անկումը ևս առավելապես աշխատում են բացատրել զուտ Մոսադեղի քաղաքական անզորությամբ, տնտեսական հարցերի նրբություններին նրա կատարյալ անիրազեկությամբ և տարբեր բնագավառներում նրա թույլ տված սխալներով։ Ջ. Մառլոն,-օրինակ, կառավարության տապալման հիմնական պատճառը հանգեցնում է իրանական բանակն իր կողմը գրավելու Մոսադեղի անկարողությանը[46]։ Քեմբրիջի համալսարանի դասախոս Պ. Էյվրին, որի «Ժամանակակից Իրան» ուսումնասիրության մեջ առանձին գլուխ է հատկացված ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակաշրջանի կարևոր պրոբլեմների քննությանը, այն կարծիքն է հայտ-

---

[45] S. N. Fisher, նշվ. աշխ., էջ 530.
[46] J. Marlowe, Iran, p. 12.

նում, թե ազգային բուրժուազիայի կառավարության վախճանը հետևանք էր միայն Մոսադեղի ներքին և արտաքին ոչ ճիշտ քաղաքականության, և այդ պատճառով երկրում ստեղծված համընդհանուր դրժգոհության ու անբարյացակամության մթնոլորտի[47]։

Գիտական պրոբլեմների հիմնականում նույն՝ միտումնավոր լուսաբանմամբ ու գնահատմամբ հանդերձ, անգլիական բուրժուական պատմագրության մեջ ևս ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակաշրջանին վերաբերող որոշ հարցեր մեկնաբանվում են բավական անկողմնապահորեն։ Այս առումով առանձնապես ուշագրավ է Լ. Էլվելլ-Սաթթոնի «Իրանական նավթը։ Ուժի քաղաքականության պատմությունը» ուսումնասիրությունը։ Չնայած նրա առաջնահերթ նպատակը Իրանի նավթի պատմության և, մասնավորապես, Անգլո-իրանական նավթային ընկերության գործունեության քննությունն է, այնուամենայնիվ, թեև նվազ հանգամանությամբ, սակայն հիմնական թեմային համազոր լրջությամբ, արծարծվում են նաև ժամանակի մյուս կարևոր խնդիրները։

Ավելորդ չէ նշել, որ բուրժուական մի շարք հեղինակների աշխատանքներում առկա է հարուստ փաստական նյութ, որն, անշուշտ, մեծապես նպաստում է ազգային բուրժուազիայի կառավարման շրջանում Իրանում ստեղծված բարդ և հակասական իրադրության, ինչպես նաև կառավարության քաղաքականության տարբեր կողմերի բացահայտմանը։

А. Г. СТАМБОЛЦЯН

БУРЖУАЗНАЯ ИСТОРИОГРАФИЯ О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ПОЛИТИКИ ПРАВИТЕЛЬСТВА НАЦИОНАЛЬНОЙ БУРЖУАЗИИ ИРАНА (1951—1953 гг.)

Резюме

Важнейшие проблемы периода правления национальной буржуазии Ирана (1951—1953 гг.) и, в частности, ряд вопросов, касающихся политики и деятельности правительства, неоднократно привлекали внимание исследователей, в том числе и буржуазных авторов.

Однако буржуазная историография в большинстве случаев политику правительства национальной буржуазии рассматривает и оценивает с реакционных позиций, преднамеренно, в определенных целях искажая, а иногда явно фальсифицируя ее сущность, основные тенденции и последствия.

[47] *P. Avery*, նշվ. աշխ., էջ 416—439.